

Տըղաբերին, որ հողին վրայ կը գալարի
 Եւ անսըւաղ մանուկներուն, ու գրկաբաց
 Մատաղատի, որդեկորոյս մօրն ալ՝ որուն
 Տարիքին բոցն հոգւոյն մուխին մեջ կը մարի...

24. ՀԻՒՂԸ

Դաշտի ճամբու մը վըրան,
 Կամ ըստորոտը լերան,
 Ուղեւորին ժամանման
 Ըսպասող հիւղն ըլլայի:
 Ու գգուանքիս կանչէի
 Ես ճամբորդներն անժաման,
 Ու ճամբուն վրայ մենաւոր,
 Ու ճամբուն վրայ ոսկեման,
 Եկուորներուն դիմաւոր՝
 Ծըխանիս ծուխն ամպէի:

Ու գրգանքիս կանչէի
 Ուղեւորներ պարտասուն,
 Ու բարեւի մը փոխան
 Հազար բարիք ես տայի:
 Հազար բարիք ես տայի.
 Գողը կրակին ճարճատուն,
 Կուրթը բերրի դաշտերուն,
 Բոլոր միրգերն աշունի,
 Ու մեղր, ու կաթ, ու գինի...

Ու լըսէի ես ցայգուն,
 Քովը կրակին ճարճատուն,
 Երզն իրիկուան եկուորին.
 Ու ջամբէի ես ցայգուն
 Երազներով պատարուն
 Նինջ՝ իրիկուան եկուորին:
 Ու լըսէի ես այգուն,
 Սրտապատար ու տրոփուն
 Գովքն իրիկուան եկուորին.
 Ու դիտէի ես այգուն,
 Ու խոկայի օրն ի բուն